

## ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 2 Փետրուարի, 2008

Հ.Յ.Դ. Սան Ֆրանցիսկոյի «Քրիստափոր» կոմիտեի կազմակերպութեամբ Շաբաթ, Յունուարի 19-ին, Սան Ֆրանցիսկոյի Հայ կենտրոնի «Սարոյեան» սրահում տօնակատարուել է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրը հոծ բազմութեան ներկայութեամբ: Տօնակատարութիւնը սկսել է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտների տողանցքով, որին հետեւել է ամերիկեան հայկական ու Հ.Յ.Դ.աշնակցութեան հիմներգերի յոտընկայս ունկնդրութիւնը: Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ու յարակից մարմինների անունով ելոյթ է ունեցել Մաթեոս Սենեքերիմեանը, որը Դաշնակցութեան 117-ամեակի առիթով շնորհաւորական ու գնահատական խօսքից յետոյ ասել է, թէ չնայած, որ այսօր ժամանակներն ու պարագաները տարբեր են հիմնադրութեան օրերից, այնուամենայնիւ Հ.Յ.Դ.աշնակցութիւնը 117 տարիներ յետոյ, շարունակում է մնալ պատմէի վրայ, շարունակում է իր համահայկական ծառայութիւնը մատուցել Սփիւռքում եւ հայրենիքում իր գաղափարապաշտ ու նուիրեալ շարքայիններով ու Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան անդամներով»:

Հ.Յ.Դ. Սան Ֆրանցիսկոյի «Քրիստափոր» կոմիտեի խօսքը փոխանցել է Խաչիկ Թագեանը, որը շեշտել է, թէ Դաշնակցութիւնը եղել ու միշտ կը մնայ հայ ժողովրդի հաւատարիմ ծառան, միշտ եղել է առաջապահ զինուորը բոլոր ճակատների վրայ: Այնուհետեւ ելոյթ է ունեցել օրուայ բանախօս, Հայ Մշակութային հիմնարկի տնօրէն Մուրատ Թօփալեանը, որը մասնաւորաբար անդրադարձել է ՀՅԴ Հայ Դատի Յանձնախմբի գործունէութեանը եւ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի ուղղութեամբ գործադրուող ջանքերին: Տօնակատարութեանը գեղարուեստական ծրագրերով հանդէս են եկել Սան Ֆրանցիսկոյի «Համազգային»-ի «Աղբալեան» մասնաճիւղի «Արեմի» պարախումբը, երգչուհի Հելին Զինտարգեանը եւ ազգային-յեղափոխական երգերի մեկնաբան Ներսիկ Իսպիրեանը:



Չորեքշաբթի, Յունուար 30-ին, մօտաւորապէս յիսուն լրագրողների եւ համայնքային ղեկավարների ներկայութեամբ ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի կենտրոնատեղիում տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս, որի ընթացքում պաշտօնապէս յայտարարուեց, որ Հայ Դատի Յանձնախումբը Միացեալ Նահանգների 2008 թուականի նախագահական նախնական ընտրութիւններում որոշել է քուէարկել ղեմնկրատական կուսակցութեան թեկնածու՝ Սենատոր Բարաք Օբամայի օգտին: Մամլոյ ասուլիսում ելոյթներ ունեցան Օբամային զօրակցող Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Պալատի անդամ Ադամ Շիֆը, Լոս Անջելոսի քաղաքապետական խորհրդի նախագահ Էրիք Գարսեթին, ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի վարչութեան ատենապետ Ռաֆֆի Համբարեանը եւ «Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան ատենապետուհի Նորա Յովսէփեանը: Օբամային զօրակցելու որոշումը ընդունուել է, որովհետեւ ներկայ թեկնածուների մէջ Օբաման լաւագոյն դիրքի վրայ է գտնուում որոշակի փոփոխութիւններ կատարելու եւ սատար կանգնելու յատկապէս ամերիկահայ քուէարկողին յուզող հարցերին: «Այսօր մենք որոշում ենք նեցուկ կանգնել այնպիսի թեկնածուի, յուսատու ղեկավարի, որը կը կարողանայ փոխել քաղաքական ոճն ու ուղին Վաշինգտոնում: Մենք հաւատում ենք, որ նա կարող է իրականացնել այս նպատակը», յայտարարել է Ռաֆֆի Համբարեանը: Նշենք, որ Յունուարի 20-ին, Սենատոր Բարաք Օբաման հանդէս եկաւ յանդուգն յայտարարութեամբ եւ իր աջակցութիւնը յայտնեց Միացեալ Նահանգների Կոնգրեսին ներկայացուած Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի վաւերացման վերաբերեալ, խոստանալով, որ պաշտօնապէս կը ճանաչի Հայոց Ցեղասպանութիւնը, եթէ նախագահ ընտրուի: Նա նաեւ վերահաստատեց իր աջակցութիւնը Միացեալ ամերիկա-հայաստանեան սերտ յարաբերութիւնների նկատմամբ, որը,- նշեց նա,- նպաստում է մեր ընդհանուր անվտանգութեանը եւ հզօրացնում է Հայաստանի ժողովրդավարութիւնը»:



Հայ Օգնութեան Միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութիւնը, կազմել է Իրաքահայութեանը օժանդակելու միացեալ յանձնախումբ, հիմնականում նպատակ ունենալով օգնութեան ձեռք մեկնելու իրաքահայութեանը: «Իրաքեան այս ահաւոր օրերին, իրաքահայութիւնը աւելի քան երբեք մեր օգնութեան կարիքն ունի»,- յայտարարել է Հայ Օգնութեան Միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութիւնը եւ կոչ ուղղել շրջանի հայութեանը, որ մասնակցելով իրաքահայութեան համար ձեռնարկուող միութեան նպաստամատոյց աշխատանքներին, զօրակցի ՀՕՄ-ի սոյն նախաձեռնութեանը: Տուրքից զերծ նուիրատուութիւնները կարելի է ուղարկել ՀՕՄ-ի Իրաքահայութեան օժանդակութեան միացեալ յանձնախմբին, 517 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202 հասցեով: Իսկ յաւելեալ մանրամասնութիւնների համար կարելի է կապուել ՀՕՄի Շրջանային վարչութեան գրասենեակի հետ՝ (818) 500-1343 հեռախօսահամարով:



Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդարանը հիւրընկալութեամբ Շաբաթ, Փետրուարի 2-ի առաւօտեան տեղի է ունեցել յատուկ հանդիպում Կալիֆորնիայի եւ Լոս Անջելոսի վարչաշրջանի պետական պաշտօնատարների հետ, որի ընթացքում նրանք առիթ են ունեցել ծանօթանալու Առաջնորդարանի ազգային, կրօնական ու կրթական ծառայութիւններին եւ փոխադարձաբար ներկայացրել են իրենց զբաղեցրած պաշտօնների աշխատանքային դաշտն ու համագործակցական կապերի առաւել ամրապնդման հեռանկարները հայկական կազմակերպութիւնների հետ: Հանդիպման աւարտին ելոյթ է ունեցել թեմակալ Առաջնորդ Մուշեղ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, որը վստահութիւն է յայտնել, որ ապագայում առաւել կը հզօրանան ու կը ծաւալեն կապերը՝ Առաջնորդարանի պետական ընտրուած պաշտօնատարների միջեւ:



ՀՅԴ Նեվադայի Հայ Դատի Յանձնախումբը իր զօրակցութիւնն է յայտնել Սիացեալ Նահանգների Կոնգրէսում Լաս Վեգասի շրջանը ներկայացնող կոնգրէսական Շելի Բըրքլիի վերընտրութեան օգտին: «Շելին ամերիկահայութեան նշանաւոր բարեկամներից է»,- ասել է ՀՅԴ Նեվադայի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Արա Շիրինեանը եւ աւելացրել, որ կոնգրէսական Շելին մշտապէս մեցուկ է կանգնել ամերիկահայութեանը յուզող հարցերին, եղել է Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի զօրաւոր պաշտպաններից մէկը եւ որեւէ ճիգ չի խնայել Լեռնային Ղաբաբաղի օգտին Կոնգրէսում քաղաքական պաշտպանութիւն ապահովելու խնդրում:

**Այս լուրերը տրամադրուած են  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել:**